

**ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ԱՐԳԻՇՏԻՆԻՒԼԻԻ ՄԻ ՊԱԿԱՍԱՎՈՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ**

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Ուրարտական սեպագիր աղբյուրները բավական լավ են ուսումնասիրված, սակայն արձանագրությունների ոչ բոլոր հատվածներն են համոզիչ ընթերցված ու մեկնաբանված: Դա վերաբերում է, մանավանդ, տուժած և պակասավոր արձանագրություններին: Այս առումով նոր ընթերցումների և մեկնաբանությունների կարիք է զգում Արգիշտիխինիլի (այժմ Արմավիրի բլուր, Հոկտեմբերյանի շրջան) պակասավոր արձանագրություններից մեկը, որի տեքստը փորագրված է եղել կողք-կողքի դրված երկու քարերի վրա, սակայն պահպանվել է միայն աջակողմյան քարը: Բնականաբար, այստեղ խոլընդոտներ են հարուցում բացակայող ձախակողմյան քարի վրա եղած տեքստի վերականգնումները, որոնց հարցում մասնագետների մոտ առկա են զգալի տարակարծություններ: Ասենք նաև, որ տեքստի կարևոր որոշ հատվածներ մինչ այժմ վերականգնված չեն և անհնարին է արձանագրության բովանդակության ամբողջական ընկալումը:

Մեզ հետաքրքրող արձանագրության առաջին տողը Գ. Ա. Մելիքիշվիլին նախկինում ընթերցել է [... ..] ra-a bi-di-i-ni¹, իսկ վերջերս հանդես է եկել առանձին հոդվածով և առաջարկել՝ [ma-ni-ni ^DQu-e]-ra-a bi-di-i-ni², Ուրարտական արձանագրությունների Ֆ. Վ. Քյունիգի ժողովածուում առկա է [... ^DQu-e]-ra-a bi-di-i-ni ընթերցումը³:

Գ. Ա. Մելիքիշվիլու և Ֆ. Վ. Քյունիգի [^DQu-e]-ra-a ընթերցումների վերաբերյալ լուրջ առարկություններ լինել չեն կարող: Սակայն արձանագրության ձախակողմյան քարի լայնությունը (տե՛ս, թերևս, 5-րդ տողի ar-di-i-še, 6-րդ տողի pi-šu-ù-še և այլ վերականգնումները), ցավոք, բացառում է ma-ni-ni բառի վերականգնման հնարավորությունը, կամ մի այլ, դեռևս չբացահայտված, բառի առկայությունը տողի սկզբում: Էլ չենք խոսում այն մասին, որ անկախ տեղի բացակայությունից, ma-ni-ni բառի անհրաժեշտությունը տվյալ դեպքում ընդհանրապես չի զգացվում, քանի որ այն առկա է 3-րդ տողում:

Արձանագրության առաջին տողի վերականգնման կապակցությամբ ավելացնենք, որ տեքստի բացակայող մասն ավելի մեծ է, քան առաջարկված [^DQu-e]-ra-a վերականգնումը: Ուստի, նկատի ունենալով, որ Իշպուխինի և Մենուայի Մհերի դռան պաշտամունքային արձանագրության մեջ երկու

¹ Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УЖН), էջ 316—317, արձանագրություն № 171:

² Г. А. Меликишвили, К чтению одной Армавирской надписи («Древний Восток и мировая культура», М., 1981, с. 67).

³ Friedrich Wilhelm König, Handbuch der chaldäischen Inschriften, II, Graz, 1957 (այսուհետև՝ König), էջ 137, արձանագրություն № 116 с.

անգամ հանդիպում է ^DQu-ú-e-ra-a ընթերցումը⁴, բնականաբար, հակված ենք խնդրո առարկա արձանագրության մեջ ևս առաջարկել [^DQu-ú-e]-ra-a վերականգնումը: Այդ դեպքում արձանագրության առաջին տողն ամբողջությամբ կարելի է ընթերցել [^DQu-ú-e]-ra-a bi-di-l-nl, որը կնշանակի «Կուերա (աստծու) կողմից»:



Արձանագրության պահպանված հատվածի լուսանկարը:

Ակնառու է, որ ^DQuera bidini «Կուերայի կողմից» արտահայտության մեջ Quera-ն դրված է սեռական հոլովով, սակայն այստեղ բացակայում է այդ հոլովի i/e ցուցիչը⁵: Ի դեպ, a-ով ավարտվող բառերի դեպքում այդ ցուցիչը ուրարտերենում ոչ միշտ է արտահայտվում բառավերջում⁶: Այդպես է նաև խնդրո առարկա տեքստի ^DQuera bidini գրության մեջ⁷:

⁴ YKH, 27=König, 10, տող 8, 42.

⁵ Հմմտ., օրինակ, ^IMenua-l pilli «Մենուայի ջրանցք» (YKH, 43, 44, 47, 48, 49, 50 և այլն), ^IRusa-l šue «Ռուսայի լիճ» (YKH, 268, տող 7), ^IRusa-l URU TUR «Ռուսայի քաղաք փոքր» (YKH, 280, տող 7), ^IRusa-l ^IArgišteḫini... «Ռուսայի, Արգիշտեի որդու...» (YKH, 283).

⁶ Տե՛ս, օրինակ՝ URU ^Allia bidini «Ալիայի (Ալիա քաղաքի) կողմից» (YKH, 58, տող 23), ^Dluarša ini ^Ésuse... «Իուարշա տաժոն» այս (տուն) suse-ն...» (YKH, 396—397, տող 1), UDU ^DIarša «Ուարշա (Թո'դ զոհաբերվի) Ի(ու)արշային (կարգա՝ Իվարշային)» (YKH, 448, տող 8), manini ^DḪaldi bidini ^IMenua ^Išpuineḫine ^Inušpua ^IMenuaḫine ulguše... «Թո'դ լինի Խալդեի կողմից Մենուային, Իշպուինեի որդուն, (և) Ինուշպուային, Մենուայի որդուն, կյանք...» (YKH, 93, տող 4—7), manini ^DḪuṣuini bidini ^IMenua ^Išpuineḫine ^Inušpua ^IMenuaḫine ulguše... «Թո'դ լինի Խուսուինի (աստծու) կողմից Մենուային, Իշպուինեի որդուն, (և) Խուշպուային, Մենուայի որդուն, կյանք...» (YKH, 94, տողեր 4—7) և այլն:

⁷ Հմմտ. «Древний Восток и мировая культура», с. 67.

Արձանագրության 2-րդ տողի ընթերցումը լուրջ դժվարություններ չի հարուցում: Այստեղ պահպանվել է ¹Ar-giš-ti-ի-ni-e հայրանունը. դեռևս անցյալ դարի վերջերին Մ. Վ. Նիկոլսկին տողի սկզբում վերականգնել է թագավորի անունը՝ [¹D¹Sar⁵-du-ri]⁸, որը մինչև օրս ընդունում են բոլոր հետազոտողները: Հետագայում այդ բառում աննշան ճշգրտում են կատարել Գ. Ա. Մելիքիշվիլին և Ֆ. Վ. Քյոնիգը՝ վերջում ավելացնելով տրական հոլովի -e ցուցիչը (¹D¹Sarduri-e): Դրա անհրաժեշտությունը թելադրվում է կոնտեքստով և ¹Argištišini-e հայրանվան -e վերջավորությամբ, որը դարձյալ կատարում է տրական հոլովի ցուցիչի ֆունկցիա: Հետևաբար, ¹D¹Sarduri-e ¹Argištišini-e նշանակում է «Սարգուրին, Արգիշտիի որդուն»: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության 3-րդ տողի սկզբի բացակայող հատվածի վերականգնումը: Այստեղ պահպանվել է ընդամենը ինչ-որ բառի ...] i-ni-i-e վերջավորությունը, որի հիման վրա Մ. Վ. Նիկոլսկին առաջարկել է [ul-gu-šī-ia]-i-ni-i-e, Գ. Ա. Մելիքիշվիլին՝ [¹Ru-sa ¹D¹Sar⁵-du-ri-ի]-i-ni-i-e, իսկ Ֆ. Վ. Քյոնիգը խուսափել է որևէ վերականգնումից:

Ասեմք, որ Մ. Վ. Նիկոլսկու [ulgušīa]inle վերականգնումը չի հիմնավորվում ուրարտական արձանագրությունների նմանօրինակ տեքստերով: Ինչ վերաբերում է Գ. Ա. Մելիքիշվիլու [¹Rusa ¹Sarduriš]inle վերականգնմանը⁹, ապա նախ՝ այդքան երկար տեքստը հնարավոր չէ տեղավորել արձանագրության ձախակողմյան քարի վրա: Այնուհետև, որևէ հիմք չկա քննվող արձանագրությունը վերագրելու միաժամանակ երկու թագավորների՝ Սարգուրի II-ին և նրա որդի Ռուսա I-ին: Ըստ ամենայնի ակնհայտ է, որ դրանում համոզված չէ նաև ինքը՝ Գ. Ա. Մելիքիշվիլին, քանի որ հիշյալ արձանագրության 9-րդ և 12-րդ տողերում արդեն նա վերականգնում է սոսկ Սարգուրիի անունը:

Արձանագրության 3-րդ տողի վերականգնման խնդրում, թյուրիմացություններից խուսափելու համար, դիմենք մեր տեքստի այլ արձանագրություններում հանդիպող կրկնակներին և տեսնենք, թե ինչ պատկեր է ստացվում: Ահա դրանց մի մասը.

- 1) manini ^DHalđini bedini ¹Menua ¹Išpuinehine
¹Inušpua ¹Menuahine ulguše pišuše alsuiše¹⁰
- 2) manini ^DHušuiñini bidini ¹Menua ¹Išpuinehine
¹Inušpua ¹Menuahine ulguše pišuše alsuiše¹¹
- 3) manini ^DŠuiñini bidini ¹Menua ¹Išpuinehine
¹Inušpua ¹Menuahine ulguše pišuše alsuiše¹²

⁸ М. В. Никольский, Клиннообразные надписи Закавказья, М., 1896, с. 64.

⁹ Այս անընդունի վերականգնումը Գ. Ա. Մելիքիշվիլին կրկնում է նաև արձանագրության այդ հատվածի նոր մեկնաբանության մեջ («Древний Восток и мировая культура», էջ 67):

¹⁰ УКН, 93=Könlg, 13, տողեր 4—7.

¹¹ УКН, 94=Könlg, 14, տողեր 4—7.

¹² УКН, 95=Könlg, 15, տողեր 4—7.

Վերը բերված տեքստերի և Արգիշտիխինիլի արձանագրության համապատասխան հատվածի համադրությունն է, որ Գ. Ա. Մեխիթիզիլուն հանգեցրել է տեքստի սկզբում *manini* բառի վերականգնմանը: Սակայն վերն արդեն նշեցինք, որ Արգիշտիխինիլի արձանագրության սկզբում այդ բառի վերականգնման համար տեղ չկա: Մեր տեքստի համար *manini*-ի անհրաժեշտությունը զգացել է նաև Ֆ. Վ. Քյոնիգը, սակայն նրա վերականգնումը ևս (7-րդ տողի սկզբում), ինչպես կտեսնենք, հիմնավորված չէ:

Manini բառի տեղը որոշելու համար բերենք օրինակներ այլ կարգի տեքստերից, որոնք, փաստորեն, կրկնում են վերոհիշյալ հատվածները, սակայն գրանցում *manini*-ն հանդես է գալիս ոչ թե նախադասության սկզբում, այլ միջին մասում.

- 1) *D*Haldini bedini *D*Haldinani KÁ bedini manini ulguše alsuiše *I*špuine *ID*Sardurehine *I*Menua *I*špuinehine *I*Inušpua *I*Menuahine¹³
- 2) *D*Haldini bedini DINGIR^{MES} UKKIN bedini manini ulguše *I*špuini *ID*Sardurihini *I*Menua *I*špuinehini¹⁴
- 3) *D*Haldini bidi *D*Haldinani GIŠKÁ bidi manini ulguše pišuše alsuiše eja ardiše arni ušmaše¹⁵

Այսօրինակ տեքստերը և Արգիշտիխինիլի արձանագրության շարունակության մեջ (տողեր 4—6) պահպանված [al]suiše, [a]rni, ušmaše և այլ բառերը հստակորեն ցույց են տալիս, որ 3-րդ տողի վերջում պահպանված ...]-i-ni-i-e-ն, անկասկած, պետք է դիտել որպես *manini* բառի վերջավորություն: Ի դեպ, հիշյալ տողի բացակայող հատվածի մեծությունը և ուրարտական մի շարք այլ արձանագրություններում առկա *ma-a-ni-ni* գրելաձևը վկայում են, որ Արգիշտիխինիլի արձանագրության 3-րդ տողը անհրաժեշտ է վերծանել [ma-a-ni]-i-ni-i-e ձևով: Ինչպես *a*-ի, այնպես էլ *i*-ի կրկնակները սոսկ գրաֆիկ նշանակություն ունեն և ծառայում են տողը որևէ կերպ լրացնելուն (հիշենք, որ սեպագրում տողադարձը բացառվում է):

Այսպիսով Արգիշտիխինիլի արձանագրության քննվող հատվածը (տողեր 1—3), ի վերջո, կարող է ստանալ հետևյալ տեսքը.

- 1) [*D*Qu-ú-e]-ra-a bi-di-i-ni
- 2) [*ID*Sar-du-ri-e *I*]Ar-giš-ti-ḫi-ni-e
- 3) [ma-a-ni]-i-ni-i-e

«Կուերա (աստծու) կողմից Սարգուրին, Արգիշտիի որդուն, թող լինի...»: Տեքստի 4-րդ տողի համար Գ. Ա. Մեխիթիզիլին առաջարկում է [ul-gu-še al]-su-i-še-e, իսկ Ֆ. Վ. Քյոնիգը՝ [ul-gu-še-e al]-su-i-še-e ընթերցումը: Հիշյալ վերականգնումներն ընդհանուր առմամբ հաստատվում են ուրարտական արձանագրությունների մաղթանքի բանաձևերով, քանի որ վերջիններում *ulguše*-ն («կյանք») ամենուրեք հանդես է գալիս հենց

¹³ YKH, 18=König, 12, տողեր 10—16, 26—32, 42—48.

¹⁴ YKH, 27=König, 10, տող 24.

¹⁵ Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, с. 38, տողեր

սկզբում¹⁶ Այստեղ միայն ավելացնենք, որ Ֆ. Վ. Քյունիգը [ul-gu-še-e] վերականգնումը, ըստ երևույթին, առաջարկել է [al]-su-i-še-e-ի նմանողությամբ, սակայն այն չի հաստատվում ուրարտական արձանագրությունների տվյալներով: Դրա փոխարեն ավելի օրինաչափ է ul-gu-ú-še, որը և առաջարկում ենք ձախակողմյան քարի 4-րդ տողի համար: Ինչ վերաբերում է [al]-su-i-še-e բառի վերջին e-ին, ապա այն սոսկ գրաֆիկ նշանակություն ունի և պայմանավորված է տողավերջի ազատ մնացած տարածությունը լրացնելով:

Տարակարծություններ կան արձանագրության 5-րդ տողի վերականգնման հարցում. Մ. Վ. Նիկոլսկին վերականգնում է [D]Hal-di-ni], Գ. Ա. Մելիքիշվիլին ձեռնպահ է մնում որևէ ընթերցումից, իսկ Ֆ. Վ. Քյունիգը առաջարկում է [ar-di-i-še]: Տողի շարունակության մեջ առկա է [a]r-ni uš-ma-še: Մ. Վ. Նիկոլսկու վերականգնումը, իհարկե, հեռու է իրականությունից, իսկ Ֆ. Վ. Քյունիգի ardiše ընթերցումը հաստատվում է ուրարտական արձանագրությունների մաղթանքի բանաձևերի փաստական նյութով, քանի որ այդ բառը, սովորաբար, հանդես է գալիս alsuiše-ի և arni-ի միջև¹⁷:

Արձանագրության բացակայող 6-րդ տողի համար Մ. Վ. Նիկոլսկին ոչինչ չի առաջարկել, Գ. Ա. Մելիքիշվիլին վերականգնել է [pi-šu-še], իսկ Ֆ. Վ. Քյունիգը՝ [pi-šu-ú-še] «ուրախություն, երջանկություն»: Նշելով տվյալ հատվածի տարածությունից, հակված ենք առաջնությունը տալու Ֆ. Վ. Քյունիգի վերականգնմանը, քանի որ լրացուցիչ *ú* նշանի համար տվյալ տողում անհրաժեշտ տեղ կա: Հիշյալ տողի շարունակության մեջ առկա է հստակ ընթերցվող *ú-a-ni-še* բառը, որը հայտնի է նաև ուրարտական արձանագրությունների մաղթանքի այլ սակավաթիվ բանաձևերից, որի իմաստը, սակայն, դեռևս բացահայտված չէ:

Լուրջ խոչընդոտներ է հարուցում քննվող տեքստի 7-րդ տողի վերականգնումը: Գ. Ա. Մելիքիշվիլին կարծում է, որ այստեղ, ակներևաբար, եղել է ինչ-որ գաղափարագիր, որի փոխարեն YKH, 172 արձանագրության մեջ տրված է «հնչյունական» ընթերցումը (պահպանվել է բառի վերջը՝ ...[rili])¹⁸: Իսկ Ֆ. Վ. Քյունիգը այս տողի բացակայող հատվածում ուղղակի վերականգնում է՝ [ma-ni-ni DINGIR]:

Նախ ասենք, որ [ma-ni-ni DINGIR]^{MES} ընթերցումը չի փաստարկվում ուրարտական արձանագրությունների նյութերով. *n'z* manini-ն («թող լինի») *n'z* էլ DINGIR^{MES}-ը («աստվածները») այստեղ ամենեին էլ իրենց տեղերում չեն: Ըստ Ֆ. Վ. Քյունիգի, ստացվում է, որ երջանիկ, ուրախալի օրեր, (UD^{ME} MES KURUN^{MES}) լինելու ցանկություն է հայտնվում աստվածներին (երևի Ֆ. Վ. Քյունիգը ենթադրում է թագավորի կողմից), այնինչ մաղթանքի բանաձևերում այդ բոլորը (նաև վերը նշված alsuiše «մե-

¹⁶ YKH, 18=König, 12, տող 12; YKH, 93=König, 13, տող 7; YKH, 94=König, 14, տող 7; YKH, 95=König, 15, տող 7:

¹⁷ Н. В. Арутюнян, Новая урартская надпись из Давти-блур («Вестник древней истории», 1966, № 3, с. 103), նույնի՝ Новые урартские надписи, с. 38, տող 5:

¹⁸ YKH, էջ 317, ծան. 6:

տվյալներով: Այնպես որ վերահրատարակվող արձանագրության 8-րդ տողի [pi-šu-ši-ni-ni]-li si-ip-ru-gi-ni ընթերցման մեջ մասնագետները տարա-
կարծություններ չունեն: Միայն ասենք, որ pišušini-ni-pi-šuše (Շուրախա-
լի, երջանիկ, բախտավոր) բառի ածականացված հոգնակին է: Ինչպես
և վերահիշյալ ^{ID}Sardurili-ն, այն համաձայնեցված է նախորդ տողի
^{UD}^{ME} ^{MES} KURUN^{MES}-ի հետ: Իսկ siprugini-ն ուրարտական արձանա-
գրություններում այդ բառի ամբողջությամբ պահպանված միակ ձևն է մեր
տեքստում²² և առայժմ նրա իմաստը, ցավոք, հնթակա չէ բացահայտման:

Արձանագրության վերջին չորս տողերը (9—12), աննշան փոփոխու-
թյամբ, իրենց տարբերակներն ունեն ուրարտական վիմագրերում, այդ պատ-
ճառով էլ վերականգնվում և ընթերցվում են այսպես. [^{ID}Sar₅-du-ri-še
LUGÁL]-tú-ḫi-ni [^DUTU-ni-ka-i [te-ru-ni DAN]·NU²³ KUR·KUR^{MES}-di
šú-ia-i-di [^DḪal-di-ni-ni al]-su-i-ši-i-ni [^{ID}Sar₅-du-ri-ni] ¹Ar-giš-ti-ḫi:

Վերը բերված մեկնաբանություններից հետո Արգիշտիի թագավորի պակա-
սավոր արձանագրության համար կարելի է առաջարկել հետևյալ ամբողջա-
կան ընթերցումը և թարգմանությունը.

Գիտական տառադարձում

- (1) [^DQu-ú-e]-ra-a bi-di-i-ni
- (2) [^{ID}Sar₅-du-ri-e] ¹Ar-giš-ti-ḫi-ni-e
- (3) [ma-a-ni]-i-ni-i-e
- (4) [ul-gu-še al]-su-i-še-e
- (5) [ar-di-i-še a]r-ni uš-ma-še
- (6) [pi-šu-ú-še] ú-a-ni-še
- (7) [^{ID}Sar₅-du-ri-li]^{MES} ^{UD}^{ME} ^{MES} KURUN^{MES}
- (8) [pi-šu-ši-ni-ni]-li si-ip-ru-gi-ni
- (9) [^{ID}Sar₅-du-ri-še LUGÁL]-tú-ḫi-ni [^DUTU-ni-ka-i
- (10) [te-ru-ni DAN]·NU KUR·KUR^{MES}-di šú-ia-i-di
- (11) [^DḪal-di-ni-ni al]-su-i-ši-i-ni
- (12) [^{ID}Sar₅-du-ri-ni] ¹Ar-giš-ti-ḫi

Թարգմանություն

(1) Կուերա (աստծու) կողմից (2) Սարգուրիին, Արգիշտիի որդուն, (3)
թո՛ղ լինի, (4) կյանք, մեծություն, (5) իշխանություն, ուժ (ու) կորով, (6) ու-
րախություն, uaniše, (7) Սարգուրյան օրեր երջանիկ, (8) ուրախալի sipru-

²² Կե'ն նաև Ն. Վ. Հարությունյանի ընթերցած si-ip-[ru-gi-ni]-ն նույն Արգիշտիի-
նի թիվի մի այլ պահասավոր արձանագրության մեջ («Вестник древней истории», 1966
№ 3, էջ 103).

²³ Հմմտ. ...[LUGÁL-tú-ḫi-ni [^DUTU-ni-ka-i te-ru-ni DJAN·NU KUR·KUR^{MES}-di,
šú-ia-i-di կրթօրինակը նախորդ ժառանգագրության մեջ հիշատակված Սարգուրի II-ի մի
այլ արձանագրության մեջ: Յ. Վ. Քյոնիգի և մեր առաջարկած [DAN]·NU-ի փոխարեն
Գ. Ա. Մելիքիշվիլու [tar-gi]-ni ընթերցումը հիմնավորված չէ, քանի որ nu նշանը բավա-
կան լավ պահպանված է սեպագիր տեքստում:

gini: (9) Սարգուրի թագավորութուն արևի տակ (10) սահմանեց հզոր՝
թշնամի երկրների վրա: (11) Խալդի (աստծու) մեծությամբ (12) Սարգուրի,
Արգիշտիի որդի:

УТОЧНЕНИЯ В ЧТЕНИЯХ ОДНОЙ ДЕФЕКТНОЙ НАДПИСИ ИЗ АРГИШТИХИНИЛИ

АРАМ КОСЯН

Резюме

Дефектная надпись из Аргиштихинили (урартский город-крепость VIII в. до н. э. в Октемберянском районе Арм. ССР) с формулой благопожелания известна еще с конца прошлого столетия. Она была высечена на двух камнях, однако до нас дошел лишь правосторонний камень. Хотя и надпись неоднократно публиковалась известными урартоведами, однако некоторые весьма важные ее отрывки, к сожалению, до сих пор остаются невозстановленными и неинтерпретированными. В предложенных новых восстановлениях, в числе других, особый интерес представляют [ma-a-ni]-i-ni-i-e „да будет“ 3-й строки и [^{ID}Sar₅-du-ri-li]^{MES} UD^{ME} MES⁵ KURUN^{MES} „Сардуrowsкие дни счастливые“ 7-й строки.

На основании вышесказанного и некоторых других установленных данных предлагается возможно полный перевод текста надписи: «Со стороны (бога) Куера (царю) Сардури, сыну Аргишти, да будет жизнь, величие, власть, сила (и) могущество, радость, иaniše, сардуrowsкие дни счастливые, радостные sirugini. Сардури царство могущественное установил под солнцем над вражескими странами. Халдовым величием Сардури, сын Аргишти».